Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի, Ջերմուկի, Վաղարշապատի, Աշտարակի, Գորիսի, Վայքի, Սպիտակի քաղաքային, Տաթևի, Հալիձորի ու Շինուհայրի գյուղական համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» N 728-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագրում, որոշման տեքստում և որոշման հավելվածներում «քաղաքային համայնք» և «գյուղական համայնք» բառերը՝ իրենց համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «համայնք» բառով՝ իրեն համապատասխան հոլովաձևերով.

2) որոշման վերնագրից հանել «, ՀԱԼԻՁՈՐԻ ՈՒ ՇԻՆՈՒՀԱՅՐԻ» բառերը.

3) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «օբյեկտների տարածքները» բառերը փոխարինել «օբյեկտի տարածքը» բառերով.

4) որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում «Հալիձորի» և 1-ին կետի 11-րդ ենթակետում «Շինուհայրի» բառերը փոխարինել «Տաթևի» բառով.

5) որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

6) որոշման N 9 հավելվածի վերնագրում «Հալիձոր» բառը փոխարինել «Տաթև» բառով.

7) որոշման N 11 հավելվածի վերնագրում «Շինուհայր» բառը փոխարինել «Տաթև» բառով.

8) որոշման N 10 հավելվածի՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերի մշակման միջոցառումների՝

ա. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 3. | Դիլիջան քաղաք | Ներառում է՝<br>Դիլիջանի քաղաքային բնակավայրի վարչական սահմանը՝ բացառությամբ «Դիլիջան» ազգային պարկի տարածքների | 4338,4 | բնակավայրի կայուն զարգացում, քաղաքաշինական միջավայրի վերա-կանգնում, կրթական, ֆինանսական, ինչպես նաև՝ տուրիզմի և հանգստի կազմակերպման ենթակառուցվածք-ների կատարելագործում | գոտևորման նախագծեր և քաղաքաշինական կանոնադրություն, քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգեր, լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման նախագծեր, ներդրումային ծրագրեր |

:»,

բ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 8. | Տաթև համայնք | ներառում է՝<br>• բնակավայրի զարգաց-ման, պատմաճարտարա-պետական հուշարձան-ների (այդ թվում՝ Տաթևի համալիր) և շրջակա լանդշաֆտի պահպան-ման և տուրիստական գոտիները<br>•պատմաճարտարապե-տական հուշարձանների («Տաթևի մեծ անապատ» վանական համալիր, «Սատանի կամուրջ», Ցաքութի եկեղեցի) և շրջակա լանդշաֆտի պահպանման գոտիները<br>• Շինուհայր-Տաթև ավտոմոբիլային ճանապարհին հարող տարածքները<br>• Տաթև համայնքի բնակավայրից հյուսիս գտնվող սարավանդի գյուղատնտեսական հողատարածքները<br>•Շինուհայր-Տաթև | 812.9<br>որից՝<br>269.0<br>126.0<br>40.0<br>300.0<br>26.2 | պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերա-կանգնում և զար-գացում, բնական լանդշաֆտի պահ-պանություն և պլանավորում, զբոսաշրջային կենտրոնի ստեղծում բնակավայրի կայուն զարգացում, հանգստի կազմակերպում | քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգեր, գոտևորման նախագծեր և քաղաքաշինական կանոնադրություն, լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման նախագծեր, ներդրումային ծրագրեր |

:».

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ավտոմոբիլային ճանապարհին հարող տարածքները<br><br>• Շինուհայր-Տաթև ավտոմոբիլային ճանապարհին հարող տարածքները | 51.7 | | |

գ. 9-րդ և 11-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

9) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին կետով.

«2.1. Սույն որոշմամբ առանձնացված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշմամբ հաստատված կարգով:»: